ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/94

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Տ. Սիմոնյանի (պետական գրանցման վկայական՝ 03Ա 078645)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ 26/9891-2019 գրությամբ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ վիճակագրական կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 10.06.2019թ. թիվ Ե/986-19 գրության պատճենի հիման վրա, 13.06.2019թ. թիվ 26/9891-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՏԵՎՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ՏԵՎՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՏԵՎՆ» ՍՊԸ-ն 17.06.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՏԵՎՆ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ վիճակագրական կոմիտեի կարիքների համար ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ նպատակով կազմակերպված «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 03.06.2019թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն 20.05.2019թ. դրությամբ /հայտը ներկա-յացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ /2000 ՀՀ դրամ/:

Ընթացակարգի 07.06.2019թ. ժամը 15:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՏԵՎՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն 20.05.2019թ.

դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 2000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«ՏԵՎՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն 20.05.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 2000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ի մոտ 2000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը փաստացի դրոշմանիշային վճարում է, որը գոյացել է այն պատճառով, որ Ընկերության վճարման հանձնարարագրում /կից ներկայացված է/ թյուրիմացաբար նշված է եղել Կենտրոնական գանձապետարանի 900008000490

միասնակսն հաշվի համարը, որը հանդիսանում է բոլոր վճարվող հարկերի ընդհանուր հաշվի համար, բացի դրոշմանիշային վճարումների: Ուստի այդ վճարումը պետությանը փաստացի կատարված է:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընկերությունը տվյալ օրվա դրությամբ հարկային պարտավորությունների նկատմամբ նույնիսկ ունի գերավճար /տվյալ օրվա Ընկերության հարկային պարտավորությունների petekamutner.am-ից արտահանված պատկերը կից ներկայացված է/: Հատկանշական է նաև, որ կայքում չի ներառած դրոշմանիշային վճարումների մասին տեղեկատվությունը, ինչը չի տալիս հնարավորություն ժամկետանց պարտավորության մասին տեղեկանալու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Ընկերությունը հայտնել է, որ եթե նույնիսկ հաշվի առնվի այն հանգամանքը, որ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը, որը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, Ընկերության կարծիքով,

չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում է, որ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «ՏԵՎՆ» ՍՊԸ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/94 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը:

3. <u>ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ վիճակագրական կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.06.2019թ. թիվ Ե/986-19 գրությամբ հայտնել է, որ վիճակագրական կոմիտեի կողմից համակարգչային և պատճենահանման օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 13.05.2019թ. հայտարարվել է ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8 ծածկագրով գնանշման հարցում: Ընթացակարգի շրջանակում 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն: Կոմիտեն, սահմանված կարգով, 29.05.2019թ. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /20.05.2019թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով և սահմանված ժամկետում /03.06.2019թ./ ստացել է անհրաժեշտ տեղեկատվությունը: Տեղեկատվությունից պարզվել է, որ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց

հարկային պարտավորություններ 2000 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է վերոնշյալ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն ներկայացնում է ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8 ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/94 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **20.05.2019թ.** հայտ է ներկայացրել «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 6-րդ չափաբաժնի մասով կազմում է 30 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 6-րդ չափաբաժնի մասով «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 03.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ՏԵՎՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ 26/9891-2019 գրությունը, ՀՀ վիճակագրական կոմիտեի 10.06.2019թ. թիվ Ե/986-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն 20.05.2019թ. հայտ է ներկայացրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 6-րդ չափաբաժնի մասով «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 6-րդ չափաբաժնի մասով կազմում է 30 000 ՀՀ դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 03.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ՏԵՎՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ «Ընկերությունը «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 20.06.2019թ. թիվ 849 տեղեկանքը, առ այն, որ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն 01.11.2018թ. դրությամբ դրոշմանիշային վճարի մասով ունի 2 000 ՀՀ դրամ պարտավորություն:

Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2019/94 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել նաև 19.01.2018թ. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի N 5 վճարման հանձնարարագիրը, համաձայն որի Կենտրոնական գանձապետարանի «900008000490» հաշվին Ընկերության կողմից փոխանցվել է 2017թ. դեկտեմբեր ամսվա 2000 ՀՀ դրամի դրոշմանիշային վճարը:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված փոխանցման մեջ թյուրիմացաբար նշված է եղել Կենտրոնական գանձապետարանի «900008000490» միասնական հաշվի համարը, որը հանդիսանում է բոլոր վճարվող հարկերի ընդհանուր հաշվի համար, բացի դրոշմանիշային վճարումների:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերն, այդ թվում նաև՝ 20.12.2018թ. թիվ 265, 19.01.2019թ. թիվ 5, 18.02.2019թ. թիվ 26, 20.03.2019թ. թիվ 000017, 19.04.2019թ. թիվ 000044, 20.05.2019թ. թիվ 000077 վճարման հանձնարարագրերն ու բյուջետային փոխանցումները՝ դրոշմանիշային վճարների մասով, արձանագրում եմ, որ Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրված 2000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորությունը հանդիսացել է դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն, որն առաջացել է մինչև 01.11.2018թ. դրությամբ, և որի վճարման համար Ընկերությունը դեռևս 19.01.2018թ. կատարել է համապատասխան փոխանցում, որը սակայն իրականացվել է ոչ թե դրոշմանիշային վճարների համար նախատեսված «900005001186» գանձապետական հաշվեհամարին, այլ հարկերի միասնական «900008000490» հաշվեհամարին, որի հետևանքով նշված պարտավորությունն ըստ էության չի մարվել:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության մոտ 2 000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց պարտավորությունը, համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վերոհիշյալ տեղեկանքի առաջացել է մինչև 01.11.2018թ. դրությամբ, որի համար Ընկերությունը դեռևս 19.01.2018թ. կատարել է համապատասխան փոխանցում, որը սակայն վերոհիշյալ պատճառով չի մարվել, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությունը, *գտնում եմ, որ մինչև 01.11.2018թ. ընկած ժամանակահատվածն Ընկերությունը առաջնորդվել է հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ իրազեկված չլինելով 2 000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի մասով առկա պարտավորության վերաբերյալ:*

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նման պայմաններում, հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, արձանագրում եմ, որ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ն «ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ 26/9891-2019 գրությամբ «ՏԵՎՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**